ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 8 — ՕԳՈՍՏՈՍ 1888

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԻՍԱԿԱՆ

Կը հրատարակուի ամեն ամիս մէկիզբը:
Բաժանորդագին է կամիկ վճարելի՝ Տարեկան 8 ֆր. — 4 դր.: — Վեցամսեայ՝ 5 ֆր. — 2 դր. 50 կոպ.:
Մէկ թիւ առանձին՝ կը վաճառուի 1 ֆր. — 50 կոպ.:

Խմբագրութեան կենդրոնավայրն է՝ Վիենա, Մխիթարեան Միաբանութեան Մայր վանքը:
Ցարմուս ծախքն խմբագրութեան վրայ է:
Ծանուցմունքն առանձին սակարկութեամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Ամենտ Շավայէր-Լերխենֆիլտ եւ Երկիր Հայոց: — Փէլիքս Նէվ, Հայոց զրական գործունէութեան վրայ:
ԳՐԱԿԱՆ — Ժողովրդոյոց զրականութիւնը: — Հայ Տպագրութեան Նորագիւտ Երախայրիք:
ԱՌՈՂՔ — Լրագրական առաջ եւ խորհրդածութիւնք:
ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ ԳՆԴԱՐՈՒԵՍՏԻՑ (Պատկերազարդ:)
ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ — Մոմազործութիւն:
ԱՏԼԷԻՈՒԵՏԼԷ
ՆՈՐԱԼՈՒՐՔ — ՏՆՏԵՍԱԿԱՆ — ՄԱՆՐԱԼՈՒՐՔ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՄԱՌՄԾԱՂԱՔ

—

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՊՐ. ԱՄԵՆՑ ՇԱՎԱՅԷՐ-ԼԵՐԽԵՆՖԻԼՏ ԵՒ ԵՐԿԻՐ ՀԱՅՈՑ

(Շարունակութիւն)

Լ. Հին Հայաստանի մասնաւորական մշակութիւնն:

Թէ Հայք Արեաց երանեան բուն (Stamm) կը վերաբերին, առ այս պէտք ենք քանի մը դիտողութիւններ ընել: Բոլոր հին Հայոց ազգցներն պարսից Շահնամէին գիւցազանց ազգցներու կը նմանին: "Հայկական" անուանեալ դասական հայերէնի կազմութիւնն — զոր արդի Հայոց աշխարհաբարէն զանազանելու է, որուն մէջը բազմաթիւ տաճկերէն ու նոր պարսկերէն բառեր կան, — հին հնդեւրոպական լեզուաց կազմութեան հետ նոյն է: Ի մասնաւորի միավանկ արմատներն կը ցուցընեն, որ "Հայկական լեզուն" երբէք սեմականէ ազդեցութիւն կրած չէ: Աշխարհաբար լեզուն երբէք կազմիչ մասունք ունի, հայկական, պահլաւեան եւ սասանեան: Ինչպէս յայտնի է այս վերջին երկուքն երանեան են, բայց հայկականն ալ լեզուաց այն խմբին կը վերաբերի, որուն ամենահինն է՝ զանդկերէնը[1]: Գրերու առոգանութիւնն (Lautlehre) բոլորովին պարսկական է, իսկ իւր բառագրքովը Ցունաստանի բարբառներու եւ սլաւերէնի հետ ի մերձուստ նմանութիւն ունի:

Ըսուածներն հաստատելի՝ ընդարձակագոյն նորաւոր քննութեանց գործը պիտի ըլլայ: Հայերէնի վրայ սեմական ազդեցութիւնը պաշտպանելու նպատակաւ՝ ոմանք Վանայ սեպագիրներու հայերէն բնագրին մատնանիշ կ'ընեն: Բայց այս ոչինչ կը ցուցընէ. վասն զի երբէք պէտք չէ աչքէ կորսնցընել, որ Հաղիւ Մեսրոպ մը (Ե. դարուն) յատուկ հայերէն այբուբեանք մը հնարեց, եւ մինչեւ նոյն ատեն գրացի ազգաց, Ասորոց եւ Պարսից, եւ նոյն իսկ Ցունաց գրերն ի գործածութեան էին:

Ով որ հայութիւնը լաւ ըմբռնել կ'ուզէ, երկու բան պէտք է աչքի առջեւ ունենալ. Հայոց

[1] Հեղինակին կարծիքը՝ թէ հայ ցեղն երանեան ցեղին մէկ հիւղն է, պատմաբանօրէն ուղիղ է: Նդնպէս սարչգ ապացուցուած է, որ հայական լեզուին մէջ բազմաթիւ պարսկական բառեր մտած են եւ բոլորովին հայացած, այնպէս որ ասոնցմէ շատերուն տեղ եւ ոչ բուն հայերէն մեզի ծանօթ բառեր կան: Սակայն ասոնցմէ երբեք չի հետեւիր, հայ լեզուին զանգիկ կամ հին պարսկական լեզուաց մէկ հիւղն ըլլալը: Պանաւանդ թէ նորագոյն լեզուաքննութիւնն ապացուցած է, թէ հայերէն լեզուին բուն հայական մասունքը բոլորովին անկախ են որ եւ է հնդեւրոպական քոյր լեզուներէ, եւ ինքն իրեն զատ հիւղ մըն է հնդեւրոպական լեզուին լծկանին մէջ: Իսկ արդի հայերէնի կազմութեան մասին բոլորովին սխալ կարծիք ունի:

Ինչպէս ուրիշ անգամ յիշած ենք, Պր. Շավայէր-Լերխենֆիլտ լաւ աշխարհագէտ է եւ իւր ազգայ սովորութեանց ու բարուց եւ ասոնց աշխարհայ վրայ գրածները մեծ հմտութիւն կը պարունակեն, սակայն ոչ իրեւ լեզուագիտին եւ ոչ իրեւ գասական պատմագէտ ու պատմագիր մեծ արժէք ունի: Այսպէս պէտք են առնուիլ անոր հայ պատմութեան վրայ գրածները, որոնց մէջ ոչ միայն քննադատութիւն եւ հիմնականութիւն չկայ, այլ եւ մեր ներքին ազգերներէ քաղած պատմութիւնները շատ անճիշդ են եւ անորոշ եւ յայտնի սխալներ կը պարունակեն, ինչպէս կը տեսնուի Սասանեանց՝ Հռիփսիմեանց եւ այլն վրայ պատմածներէն:

digitised by A.R.A.R.@